ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 09

Լերմոնտովո համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 07-ի նիստի.

գ. Լերմոնտովո Համայնքի ղեկավարի աշխատասենյակ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Էդիկ Համբարձումի Չախալյանը

Մասնակցում էին՝

Համայնքի ավագանու անդամներ՝ Վիտալի Ասադովը, Իվան Բոլոտինը, Քրիստինե Խառատյանը, Անդրեյ Կորոլյովը, Վասիլի Կորոլյովը; համայնքապետարանի աշխատակիցները:

ՆԻՍՏԸ - Էդիկ Չախալյանը ժամը 11:00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0 ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1.Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը աճուրդ վաճառքով օտարելու մասին

զեկ.Ա.Գալուստյան

2.Հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու մասին

զեկ.Ա.Գալուստյան

3.Լերմոնտովո համայնքի 2022 թ-ի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին:

զեկ.Մ.Բոլոտինա

ԸՆԹԱՑՔԸ՝

1. <u>ԼՍԵՑԻՆ</u> - Լերմոնտովո համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի աճուրդ վաճառքով օտարելու մասին

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ա.Գալուստյանը: Նա ներկայացրեց օտարման ենթակա հողամասերը /խոտհարքները/, մեկնարկային գները: Հիշեցրեց, որ մասնակցության վճարը 2000 դրամ է, նախավճարի չափը կազմում է մեկնարկային գնի 50%-ը, իսկ քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%-ը: Քննարկումների ընթացքում ավագանու անդամները որոշեցին տալ իրենց համաձայնությունը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում:

2. <u>ԼՍԵՑԻՆ</u> - Հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու մասին

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ա.Գալուստյանը: Նա նշեց, որ 06-043-0015-0061 ծածկագրի 0,06533հա "բնակավայրերի" նշանակության հողամասը 2004 թ-ի համապատասխան որոշմամբ սխալմամբ չի փոխանցվել համայնքին,

ուստի պետք է դիմել ԱԳԿՊԿ-ին սխալը ուղղելու համար: Ավագանու անդամները որոշեցին համաձայնվել տվյալ հարցի հետ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում:

3. <u>ԼՍԵՑԻՆ</u> - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 2022թ-ի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին հաղորդումը.

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան, նա ներկայացրեց 2022 թ-ի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման հաշվետվությունը

Տեղի ունեցան քննարկումներ, որի զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

1.ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

2.ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ

3.ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

4.ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

5.ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ